# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ԱՍՏՂԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ N 23

30/04/2018

ԱՍՏՂԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-013-0083-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ ՏԻՄ-ի մասին օրենքի 18-րդ հոդվածի պահանջները , Հրապարակային սակարկությունների մասին ՀՀ օրենքը և ՀՀ հողային օրենսգիրքը

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ , համայնքային սեփականություն հանդիսացող 05-013-0083-0005 կադաստրային ծածկագրով 0.179 հա մակերեսով Գյուղատնտեսական նպատակային նաշանակության , Այլ հողատեսք գործառնական նշանակության հողը օտարել աճուրդ-վաճառքի միջոցով: Աճուրդում հողամասի մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի չափով՝ 0.179x107500=19250 /տասնիննը հազար երկու հարյուր հիսուն / ՀՀ դրամ , նախավճարը սահմանել մեկնարկային գնի 5% չափը՝ 963 /ինները հարյուր վաթսուներեք/ ՀՀ դրամ , աճուրդում նվազագույն քայլի չափը նույնպես սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով՝963 /ինները հարյուր վաթսուներեք/ ՀՀ դրամ , աճուրդի մասնակցության մուտքավճար սահմանել 1000 /մեկ հազար/ ՀՀ դրամ:

2. Վերոնշված արժեքները ընդունել հիմք և առաջարկել համայնքի ղեկավարին օրենքով սահմանված կարգով կազմակերպել աճուրդ վաճառքը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՐՇԱԿՅԱՆ ՏԻԳՐԱՆ

2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԽԻԹԱՐ

3. ԴԱՎԵՅԱՆ ՄԱՆՎԵԼ

4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏՅՈՄ

5. ԿՆՅԱԶՅԱՆ ԳԱԳԻԿ

6. ՄԿՈՅԱՆ ՎԻԳԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ**